



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

**Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ**

20.05.2020Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 13 անդամները:

Բացակայում են Ն.Վարդանյանը և Ա.Փանոսյանը:

**Նիստը վարում է համայնքի ղեկավար Հ.Շահգալոյանը:**

**Համայնքի ղեկավար Հ.Շահգալոյանի** հրավերով ավագանու նիստին մասնակցում են **համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը, Ա. Ծերունյանը, Ա.Ջաքարյանը, Գ.Աֆյանը և գյուղերի վարչական ղեկավարները:**

**Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան**

Հաստատել համայնքի ավագանու թիվ 3 արտահերթ նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքի 2020 թվականի բյուջեի 1- ին եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի հաղորդման մասին:
2. Չարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 69-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
3. Չարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 72 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

**Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան**

Եթե առարկություններ չկան, քվեարկության են դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

**Կողմ -13**

**դեմ - 0**

**ձեռնպահ -0**

**Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:**

**Լսեցին.**

**1. Չարենցավան համայնքի 2020 թվականի բյուջեի 1-ին եռամսյակի եկամուտների և ծախսերի կարարողականի հաղորդման մասին:**

**/Չեկ. Գ.Աֆյան/**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի՝ **առաջարկում եմ**, հաստատել Չարենցավան համայնքի 2020 թվականի 1-ին եռամսյակի բյուջեի կատարման մասին հաղորդումը:

**Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան**

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-13**

**դեմ - 0**

**ծեռնպահ -0**

**Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:**

**Լսեցին.**

**2 Չարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 69-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:**

**/Չեկ. Գ.Աֆյան/**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով՝ **առաջարկում եմ**. Չարենցավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի «Չարենցավան համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 69-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. Չարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի «Չարենցավան համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 69-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

**1) Հաստատված բյուջեի վարչական մասի՝**

ա. 7422 «Վարչական գանձումներ»-ի «Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ» հոդվածի «36310,0» թիվը փոխարինել «34310,0» թվով,

**2) Հաստատված բյուջեի ֆոնդային մասի՝**



- ա. 8411 «Հողի իրացումից մուտքեր» հոդվածի «43406.0» թիվը փոխարինել «46691.7» թվով,
- 3) Համայնքի բյուջեի ծախսերի վարչական մասում կատարել հետևյալ փոփոխությունները.**
- ա. 0161 «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)» - ի 4241 Մասնագիտական ծառայություններ» սինթետիկ հաշվի «5100.0» թիվը փոխարինել «3100.0» թվով,
- 4) Համայնքի բյուջեի ծախսերի ֆոնդային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.**
- ա. 01-1-1 «Համայնքապետարանի պահպանման ծախսեր» - ի 5122 «Վարչական սարքավորումներ» սինթետիկ հաշվի «260.0» թիվը փոխարինել «290.0» թվով,
- գ. 0451 «Ճանապարհային տրանսպորտ» - ի 5113 «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» սինթետիկ հաշվի «28869,362» թիվը փոխարինել «32125.062» թվով:

**Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան**

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-13**

**դեմ - 0**

**ձեռնպահ -0**

**Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:**

**Լսեցին.**

**3.Չարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 72 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:**

**/Չեկ. Ս.Մուրադյան/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով Չարենցավան համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի պետ **Ա.Ջաքարյանի** զեկուցագիրը և «Լուսաբաց» ՀՈԱԿ-ի տնօրեն **Մ.Կարապետյանի** 2020 թվականի մայիսի 11-ի գրությունը. **առաջարկում եմ**

1. Չարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի «Չարենցավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2020 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 72 որոշման 5-րդ հավելվածի (Չարենցավան համայնքի «**Հրաշք**» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի 2020թ. աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը) 11-րդ տողի «**3**» թիվը փոխարինել «**2**» թվով:














11	Երաժ/դաստիարակ	-	--	2	89700-92700	0	0	185 400
----	----------------	---	----	---	-------------	---	---	---------

2. Չարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի «Չարենցավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2020 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 81 որոշման 4-րդ հավելվածը (Չարենցավան համայնքի «**Լուսաբաց**» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի 2020թ. աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը) լրացնել 17-րդ տողով՝ «**Ֆիզկուլտուրայի հրահանգիչ**» հաստիքային անվանումով:

17	Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	-	--	1	89700-92700	0	0	89700-92700
----	--------------------------	---	----	---	-------------	---	---	-------------

**Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան**

Քվեարկության եմ դնում որոշումը:

	<b>Կողմ-13</b>	<b>դեմ-0</b>	<b>ձեռնպահ-0</b>
Բաբայան Նարեկ			
Բաբայան Վալերի			
Գասպարյան Անատոլի			
Գասպարյան Մելիք			
Գրիգորյան Հակոբ			
Դավթյան Կարեն			
Երիցյան Գագիկ			
Վարդանյան Սարգիս			
Վարդանյան Նորայր			
Պողոսյան Մնացական			
Սահակյան Երեմ			
Խլղաթյան Արսեն			
Եփրեմյան Տարոն			

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Նիստն արձանագրեց **Ս.Մուրադյան**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Հ.ԿՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

